Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2023 թվականի փետրվարի 13-ի N162 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավարի 2023 թվականի հունվարի 31-ի N26-Ա- N29-Ա, 2023 թվականի փետրվարի 3-ի N30-Ա- N31-Ա, 2023 թվականի փետրվարի 7-ի N32-Ա-N33-Ա, 2023 թվականի փետրվարի 9-ի N34-Ա-N35-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N26-Ա, N28-Ա, N29-Ա և N32-Ա որոշումների նախաբաններում հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված։
2. N26-Ա, N27-Ա, N28-Ա, N32-Ա և N35-Ա որոշումների մեջ հողամասի սեփականատիրոջ վերաբերյալ տեղեկատվություն առկա չէ։
3. N30-Ա որոշման նախաբանում հղումը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի դրույթին սխալ է կատարված։
4. N31-Ա և N34-Ա որոշումների նախաբաններում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին։
5. N26 - N35 որոշումներում չի պահպանվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված վավերապայմանը։

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ